

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Արուսյակ Կոյայի Անդրեասյան

**ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ԸՍՏ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ
(տիպաբանական ուսումնասիրության փորձ)**

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական
թեկնածու, դոցենտ

գիտությունների

Ս. Բ. Կարաբեկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական
դոկտոր, պրոֆեսոր

գիտությունների

Ս. Ա. Տուլեուբաև

բանասիրական
թեկնածու

գիտությունների

Մ. Դ. Հովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝

Մեսրոպ Մաշտոցի անվան

հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունվարի 29-ին, ժամը՝ 13:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. դեկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բ.գ.թ., դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության առարկան և նպատակը

Արաբական լեզվաբանության մշտապես քննարկվող խնդիրներից մեկը քերականական ուսմունքների ձևավորման ընթացքի վրա հունական ազդեցության հարցն է:

IX դարում Արաբական խալիֆայությունում ծավալվում է թարգմանչական մեծածավալ գործունեություն, որը հիմնականում կատարվում է ասորերենի միջնորդությամբ. այն է՝ հունարենից ասորերեն, ապա՝ արաբերեն: Միանշանակ կարելի է փաստել, որ դա զուտ թարգմանչություն չէր, այլ գիտական և փիլիսոփայական օտար ժառանգությունը յուրացնելուն ուղղված ուսումնասիրություն: Ինչպես նշում է հայտնի արաբագետ, իսլամագետ Դ. Գուտասը, հունական գիտական և փիլիսոփայական գրեթե ամբողջ ժառանգությունը մինչև X դարի վերջը արդեն հասանելի էր արաբներին¹: Այն որոշիչ դեր ունեցավ արաբամուսուլմանական մշակույթի զարգացման ամբողջ ընթացքում:

Արաբական մշակութային և գիտական կյանքում թարգմանչական այս գործունեության կարևորությունը թերևս կարելի է համեմատել V դարում հայոց գրերի ստեղծումից հետո Հայաստանում ծավալված թարգմանչական շարժման և հայ հունաբան դպրոցի² ձևավորման մեծ նշանակության հետ: Այս շրջանում ծաղկում ապրեցին թարգմանական ու ինքնուրույն գրականությունը, հունարենից հայերեն թարգմանվեցին ու մեկնության ենթարկվեցին անտիկ հեղինակների տասնյակ արժեքավոր աշխատություններ: Դրանց թվում էին Արիստոտելի «Ստորոգություններ» («Կատեգորիաներ») և «Մեկնության մասին», Պորփյուրի «Ներածություն» և Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» երկերը:

IX-X դարերում Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդադում կատարվում են հսկայական նշանակություն ունեցող ուսումնասիրություններ ինչպես արաբական քերականության, այնպես էլ հունական տրամաբանության արաբերեն մեկնությունների ոլորտներում: Կատարելով հունական փիլիսոփայական և տրամաբանական աշխատությունների թարգմանություններ և

¹ Gutas D., Greek Thought, Arabic Culture. The Graeco-Arabic translation Movement in Baghdad and early 'Abbāsid Society (2nd-4th/ 8th-10th centuries), London, *Routledge*, 1998

² Տե՛ս, Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, *Серия "Собрание древне-армянских и древне-грузинских текстов, издаваемых Имп. АН"*, Петроград, 1915; Մանանդյան Հ., Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928; Զահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները Հին և Միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Երևան, 1954; Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականության տերմինների ստեղծման գործում, Երևան, 1971

ստեղծելով արաբերեն եզրաբանություն՝ այս թարգմանիչներն ու մեկնիչները հունական տրամաբանությունը հաղորդակից դարձրին արաբական քերականությանը և փորձեցին կիրառել դրա սկզբունքները արաբերենի համատեքստում: Սա առաջ բերեց հակասական և ոչ միանշանակ վերաբերմունք արաբ քերականագետների և աստվածաբանների շրջանում:

Տրամաբանությունն այս համատեքստում ունի երկու դրսևորում՝ ձևական և լեզվական: Մի կողմից՝ այն առնչվում է մտքի ձևերի³, նրանց կառուցվածքի⁴, դատելու ընթացքում դրանց շաղկապման կանոնների, ինչպես նաև մտածողության հիմնական օրենքների հետ: Մյուս կողմից՝ մտքի ձևերն արտահայտվում են լեզվի միջոցով, և տրամաբանությունը չի կարող առանձնացվել այն լեզվից, որով արտահայտվում է:

Տրամաբանության ընկալման այս տարբեր ասպեկտների համատեքստում է, որ IX-X դարերում լեզվի և մտածողության հարաբերակցության շուրջ արաբ քերականագետների և տրամաբանների շրջանում ծավալվում են սուր բանավեճեր: Քերականագետներն այն կարծիքին էին, որ տրամաբանությունը երկրորդական է ցանկացած լեզվի քերականության նկատմամբ: Իսկ տրամաբանները համոզված էին, որ տրամաբանությունը համընդհանուր է աշխարհի բոլոր լեզուների համար:

Այս հարցում այլընտրանքային մոտեցում ուներ արաբական աշխարհում իր ժամանակակիցների կողմից «Երկրորդ Արիստոտելի» պատվավոր կոչումը վայելող X դարի նորալատոնական փիլիսոփա Աբու Նասր ալ-Ֆարաբին (870-950):

Ատենախոսության գլխավոր նպատակն է վերհանել և ներկայացնել այն, ըստ էության, միջփիտակարգային հետազոտական հնարները, որ մշակում և կիրառում է Ալ-Ֆարաբին՝ արաբերենի լեզվական երևույթները հունական տրամաբանությանը համապատասխանեցնելու համար: Աշխատանքը նպատակ ունի նաև որոշ զուգահեռներ անցկացնելու մի կողմից՝ արաբական քերականության և Ալ-Ֆարաբիի տրամաբանական-քերականական մոտեցումների, մյուս կողմից՝ հայ քերականության ձևավորման վաղ շրջանում հայ հունաբան դպրոցի ներկայացուցիչների մոտեցումների միջև:

Աշխատանքում ներկայացվող ընդհանուր հարցադրումներն ու խնդիրները

Հետազոտության հիմքում դրված են ստորև ներկայացվող մի շարք հարցադրումներ և խնդիրներ:

³ Մտքի ձևերն են *հասկացությունը*, *դատողությունը* և *մտահանգումը*: Դրանք ընդհանուր են մտքերի համար՝ վերացարկված նրանց կոնկրետ բովանդակությունից, և միտքը դրսևորվում է այս երեք ձևերի միջոցով: Մանրամասն տե՛ս, Բրուսյան Գ., Տրամաբանության դասընթաց, Երևան, 1987, էջ 10-13

⁴ Մտքի կառուցվածքը մտքի ձևական տարրերի շաղկապման եղանակն է: Տե՛ս, նույն տեղում:

1. Ուսումնասիրելով հունական քերականության և տրամաբանության ազդեցության բնույթը արաբական քերականական ավանդույթի ձևավորման և հետագա զարգացման վրա՝ բացահայտել արաբ քերականագետների և տրամաբանների բանավեճերի հիմնական սկզբնաղբյուրը:
2. Ներկայացնելով արաբական աշխարհում արիստոտելյան տրամաբանությանը ծանոթանալու շրջանը՝ ուսումնասիրել Ալ-Ֆարաբիի ներդրումը լեզվի բնույթի վերլուծության գործում՝ ըստ արիստոտելյան կատեգորիաների:
3. Վերհանել Ալ-Ֆարաբիի՝ տրամաբանության ընկալումը և լուսաբանել տրամաբանության ու քերականության միջև կապի վերաբերյալ նրա մոտեցումը:
4. Ներկայացնելով Ալ-Ֆարաբիի լեզվի փիլիսոփայությունը և տրամաբանության միջոցով արաբերենի վերլուծության նրա մեթոդը՝ ցույց տալ, թե ինչպես է նա փորձում վերակազմավորել արաբական նախադասությունները, որպեսզի ի հայտ բերի դրանց տրամաբանական կառուցվածքը:
5. Նկատի ունենալով հունական գիտական մտքի ազդեցությունը հայ և արաբական լեզվաբանական ավանդույթների ձևավորման վրա՝ բացահայտել այս երկու ավանդույթներում համանման խնդիրներ քննելու հավանականությունը:

Աշխատանքում ուսումնասիրվող խնդիրների արդիականությունը

Արաբերենի պատմության մեջ VIII-X դարերը կարելի է բնորոշել որպես միասնականացման և ստանդարտացման շրջան: Արաբական միջնադարյան քերականական ավանդույթը ևս այս շրջանում առանձնանում է մեթոդաբանական և հասկացակազմային միասնականությամբ: Տվյալ ժամանակաշրջանում արաբերենը արաբների իսկ կողմից ընկալվել է որպես կատարյալ՝ աստվածատուր լեզու, իսկ արաբական քերականությունը՝ որևիցե օտար ազդեցությունից զուրկ արաբական գիտակարգ: Այդ առումով արաբերենին փայլուն տիրապետող տրամաբան և փիլիսոփա Ալ-Ֆարաբիի կողմից արաբերենի և արաբական քերականության «բացերը» հիմնավորելու փորձը ակնհայտորեն հակադրվում էր գերիշխող տեսակետներին: Ալ-Ֆարաբիի ամբողջ փիլիսոփայությունն ու հասկացակազմի մեթոդաբանական մշակումը նպատակ ունեին արաբերենի լեզվական երևույթները համապատասխանեցնելու այսպես կոչված համընդհանուր տրամաբանությանը: Այս համատեքստում արդիական խնդիր է գնահատել գիտելիքի ունեցած դերը արաբական լեզվաբանության պատմության մեջ՝ տարբեր ավանդույթների, մտքի դպրոցների ներգրավման խնդրի և դրանց կողմից լեզվի ու մտածողության հարաբերակցության ընկալման քննությամբ: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև տարբեր լեզվաբանական ավանդույթներ (հայ, հունական և արաբական) վերլուծաբար համադրելու կարևորությամբ՝ դրանով իսկ նպաստելով տարբեր ժողովուրդների լեզվաբանական մտքի զարգացման որոշ ընդհանրությունների վերհանմանը:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության նորույթն այն է, որ աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում **ա**) վերհանել արաբական միջավայրում միջգիտակարգային

հետազոտական մեթոդների կիրառությունը՝ հիմնվելով X դարի նշանավոր փիլիսոփա Ալ-Ֆարաբիի աշխատությունների վրա: Չնայած տարբեր հեղինակներ քննության են առել մեծ փիլիսոփայի ստեղծագործություններն ու լեզվի և տրամաբանության վերաբերյալ նրա մոտեցումները, բայց ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է կատարվում համապարփակ վերլուծելու Ալ-Ֆարաբիի հայեցակարգում լեզվի և տրամաբանության հարաբերակցության խնդիրը արաբական քերականության և ժամանակի գիտական միջավայրի համատեքստում, **բ)** վերլուծել այն քերականական գործիքակազմը, որը կիրառում է Ալ-Ֆարաբին իր տրամաբանական պնդումներում, **գ)** քննության առնել հունական գիտական մտքի ազդեցությամբ արաբական և հայ լեզվաբանական մտքի ձևավորման շրջաններում քննարկման առարկա դարձած որոշ համանման հարցեր:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ալ-Ֆարաբիի աշխատություններն ու գործունեությունը արաբական քերականության և հունական տրամաբանության ու քերականության համատեքստում դիտարկելու մեթոդաբանական հիմքը կազմել են պատմավերլուծական քննության, միջգիտակարգային հետազոտության մեթոդները: Աշխատանքի տեսական գործիքակազմը հիմնվում է գլխավորապես Ք. Վերստեդի, Ռ. Թալմոնի, Դ. Ֆրոլովի, Ֆ. Հադդադի, Փ. Ադամսոնի ու Ա. Քեյի, Ֆ. Յիմմերմանի, Մ. Մահդիի և Շ. Աբեդի, Գ. Ջահուկյանի և Է. Աթայանի աշխատություններում ձևավորված մեթոդաբանական մոտեցումների և տեսական դրույթների վրա:

Ատենախոսության գործնական նշանակությունը

Հետազոտության ընթացքում կատարված վերլուծությունն ու առաջ քաշված հարցադրումները կարող են հիմք հանդիսանալ լեզվաբանական պատմագրության, լեզվի փիլիսոփայության ոլորտների, աղբյուրագիտական և միջմշակութային ուսումնասիրությունների համար: Ատենախոսության մեջ կատարված որոշ ուսումնասիրություններ և դիտարկումներ կարող են օգտագործվել նաև մի կողմից՝ հայ փիլիսոփայական և քերականական մտքի պատմության, մյուս կողմից՝ արաբական քերականության ու Ալ-Ֆարաբիի լեզվի փիլիսոփայության միջև որոշ զուգահեռների վերհանման համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու հարցադրումները կարող են կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ տրամաբանության և քերականության հարաբերակցությանն ու տիպաբանությանն առնչվող դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են «Արևելագիտության հարցեր» (Երևանի պետական համալսարան), «Արաբագիտական ուսումնասիրություններ» (Երևանի պետական համալսարան), «Կանթեղ» (ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ) և «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն

և բանասիրություն» (Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան) գիտական հոդվածների ժողովածուներում տպագրված հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության հիմնական հարցադրումները, հետազոտական խնդիրներն ու նպատակը, տրվում է օգտագործված գրականության համառոտ նկարագիրը, ինչպես նաև հարցի ուսումնասիրման պատմությունը:

Առաջին գլխում՝ «Արաբական քերականական ավանդույթը և դրա կապը հունական տրամաբանության հետ VIII-X դարերում», նկարագրվում է արաբական քերականական ավանդույթի ձևավորման պատմությունը, պարզաբանվում է դրա վրա հունական ազդեցության բնույթը: Այստեղ ներկայացվում է արաբական միջավայրում հունական, և մասնավորապես՝ արիստոտելյան տրամաբանությանը ծանոթանալու շրջանը, որն ուղեկցվում է այս գիտակարգերի հարաբերակցության շուրջ բանավեճով:

Արաբական պաշտոնական պատմագրական վարկածն արաբական քերականության ձևավորման վրա որևիցե օտար քերականական ավանդույթի ազդեցության հնարավորության հարց անգամ չի ակնարկում: Սրանով պայմանավորված՝ արաբ քերականագետներից շատերը լեզվաբանության բնագավառում հունական տրամաբանության ցանկացած կիրառում, որն արդեն նկատելի էր IX դարում Արաբական խալիֆայությունում ծավալված թարգմանչական գործունեությունից հետո, դիտում էին որպես օտար ավանդույթի ներմուծում «մաքուր» արաբական ավանդույթ, որն անընդունելի էին համարում: Իսկ արաբագիտական մասնագիտական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են եղել՝ մասնավորապես շեշտելով արաբական քերականության վրա հունական ազդեցության գործոնը: Այս առումով կարելի է ենթադրել հունական տրամաբանության՝ առնվազն հունական քերականությամբ միջնորդավորված ազդեցությունը արաբական քերականության ձևավորման վրա: Սկսած X դարից՝ արաբական քերականական աշխատություններում սկսում են ի հայտ գալ նաև արիստոտելյան սահմանումներ: Այնուամենայնիվ, արիստոտելյան ազդեցությունը չփոխեց արաբական քերականական համակարգի կառուցվածքային տրամաբանությունը, որն «այս ավանդույթի զարգացման ամբողջ ընթացքում իր բնույթով մնաց այնպիսին, ինչպիսին այն ներկայանում է Սիբաուեյհիի *Al-Kitāb-ում*»⁵:

⁵ Фролов Д., Способы определения понятий в традиционной арабской грамматике, «Арабская филология. Грамматика, стихосложение, корановедение», Москва, «Языки славянских культур», 2006, стр. 65-93, стр. 85-86

Պետք է նշել, որ դեռևս նախամատենագրական շրջանում Հայաստանը ևս երկար ժամանակ գտնվում էր քերականության սկզբնավորման այդ գլխավոր կենտրոններից մեկի՝ հունական աշխարհի հետ քաղաքական, տնտեսական և մշակութային սերտ շփման մեջ՝ հայտնվելով հելլենիզմի ազդեցության ոլորտում, որը բնականաբար անդրադարձավ նաև լեզվա-քերականական գիտելիքների փոխանցման վրա:

Վերոնշյալով պայմանավորված՝ թե՛ հայ, թե՛ արաբական քերականական ավանդույթների ձևավորման վաղ շրջանում քննարկվել են հունական ավանդույթից փոխանցված համանման հարցեր, այդ թվում բայի ժամանակների և բայի ու անվան առաջնության հարցերը:

Խոսելով արաբ տրամաբանների մասին՝ պետք է նկատել, որ նրանք, նույնպես ընդգրկվելով հունական (մեծ մասամբ՝ արիստոտելյան) տրամաբանության ազդեցության ոլորտ, պնդում էին, որ մտային գործընթացները համընդհանուր են, իսկ այդ գործընթացների լեզվական արտահայտությունները՝ կամայական: Եվ քանի որ տրամաբանները մտային գործընթացները անկախ էին համարում լեզուներից, որտեղ դրանք իրենց արտահայտությունն են գտնում, նրանցից ոմանք եկան այն եզրակացության, որ հարկ է զբաղվել միայն այդ մտային գործընթացների ուսումնասիրմամբ՝ չանդրադառնալով լեզուների բազմազանությանը: Սա ստիպեց քերականագետներին առնչվել մինչ այդ իրենց կողմից անուշադրության մատնված խնդիրների հետ:

932թ.- ին Բաղդադում՝ Աբբասյան խալիֆ Ալ-Մուքթադիի (908-932) վեզիր Իբն ալ-Ֆուրաթի պալատում տեղի ունեցավ գրականության մեջ հայտնի մի բանավեճ: Այն արտացոլում էր այս շրջանում տրամաբանության և քերականության «հակամարտությունը»: Տրամաբանության պաշտպանն էր հայտնի թարգմանիչ և տրամաբան, ասորի քրիստոնյա Աբու Բիշր Մաթթա Իբն Յունուսը (870-940), որն արիստոտելյան փիլիսոփայության Բաղդադի դպրոցի հիմնադիր անդամներից էր⁶: Իսկ արաբական քերականությունը ներկայացնում էր քերականագետ Աբու Սաիդ ալ-Սիրաֆին (893-979), որն ավելի ուշ հայտնի դարձավ Սիբաուեյիի *Al-Kitāb*- ի մեկնությամբ:

Ըստ տրամաբան Մաթթայի՝ տրամաբանությունը ճշմարիտ և սխալ արտահայտությունների տարբերակման գործիք է, քանի որ այն զբաղվում է խոսքի ճիշտ արժևորմամբ: Խոսքի ձևը (*lafz*) տարբերվում է ըստ ազգության, բայց նշանակությունը (*ma'nā*) համընդհանուր է բոլոր ազգերի համար: Մաթթայի համոզմամբ՝ տրամաբանն ուսումնասիրում է նշանակությունները (*ma'āni*), իսկ քերականագետը սահմանափակվում է միայն ձևերի (*alfāz*) ուսումնասիրությամբ, որոնք կամայական են: Նա մատնանշում է, որ բոլոր ազգությունների համար «4+4=8» հավասարումը ճշմարիտ է՝ անկախ նրանց լեզուներից: Սա նշանակում է, որ տրամաբանը կարիք չունի քերականագետի, իսկ քերականագետը,

⁶ Այդ դպրոցի հայտնի ներկայացուցիչներից էր նաև Ալ-Ֆարաբին:

ընդհակառակը, տրամաբանության կարիքը շատ ունի, քանի որ չի կարող վերլուծել խոսքը՝ առանց դրա նշանակությունը հասկանալու:

Ալ-Սիրաֆին հակառակվում է Մաթթային՝ պնդելով, որ նշանակությունները (*ma'āni*) ներքին ամուր կապերով կապված և փոխհամաձայնեցված են կոնկրետ լեզվի հետ: Նա հայտարարում է, որ տրամաբանությունը ցանկացած մասնավոր լեզվի նկատմամբ երկրորդական է, որ համընդհանուր տրամաբանություն գոյություն ունենալ չի կարող: Հետևաբար, արաբերենն ունի իր սեփական տրամաբանությունը (*manṭiq al-'arabiyyah*), որն արտացոլվում է նրա քերականության մեջ: Հենց դրա միջոցով էլ քերականությունը լուծում է իր առջև դրված խնդիրները: Ալ-Սիրաֆին իր գարմանքն է արտահայտում, որ ասորի Մաթթան, որը բավարար չափով չի տիրապետում արաբերենին (արաբերենը ասորի թարգմանիչների համար երկրորդ լեզու էր, և Ալ-Սիրաֆիի համար բնականաբար դժվար չէր ցույց տալ Մաթթայի թերացումն արաբերենում), կարող է խոսել արաբերենի իմաստների մասին: Եվ երբ նա հարցնում է վերջինիս *fi* մասնիկի բոլոր իմաստները, Մաթթան ոչինչ չի կարողանում պատասխանել և ի վերջո պարտություն է կրում այս բանավեճում:

Այստեղ կարևոր է նկատել, որ, չնայած տարակարծություններին, Մաթթան և Ալ-Սիրաֆին աշխատում են եզրաբանական ընդհանուր հենքի վրա: Նրանք երկուսն էլ փորձում են նկարագրել լեզվի և դրա միջոցով արտահայտվող մտքերի կամ իմաստների միջև կապը: Լեզվական արտահայտությունները նրանք անվանում են *lafz* (*բառ, հնչյունային ձև, հ.թ.՝ alfāz*), իսկ մտայինը՝ *ma'nā* (*իմաստ, նշանակություն, գաղափար, մտային բովանդակություն, հ.թ.՝ ma'āni*):

Խնդիրն այն է, որ այս երկու հայեցակարգերում տարբեր են *ma'nā* եզրույթի ընկալումները: Մաթթայի հայեցակարգում նշանակությունները (*ma'āni*) վերաբերում են մտքի տրամաբանական գործողություններին (ինչպես Մաթթայի օրինակը գումարման մաթեմատիկական գործողության վերաբերյալ) և կարող են համարժեք լինել «հասկացություններին» ու «դատողություններին»: Իսկ ըստ Ալ-Սիրաֆիի՝ *նշանակությունները* (*ma'āni*) համընդհանուր չեն. յուրաքանչյուր լեզու ունի իր սեփական նշանակությունները⁷: Ըստ քերականագետների՝ *ma'āni*-ն քերականական գործառույթներ են, հնչյունական արտահայտությունների իմաստային ասպեկտներ, որոնց արտահայտման համար բառը կարող է օգտագործվել՝ համաձայնեցվելով միայն տվյալ լեզվի կանոններին: Հետևաբար, մասնիկն ունի կոնկրետ քերականական գործառույթներ, որոնք Մաթթան, ոչ լեզվակիր լինելով, չգիտեր:

Այստեղ պետք է նկատել այն հանգամանքը, որ չնայած Ալ-Սիրաֆին մերժում էր արաբերենի վերլուծության գործում հունական տրամաբանության

⁷ Ալ-Սիրաֆիի կողմից «նշանակություն» բառի նման կիրառումը հարաբերակցվում է դրա ստոիկյան կիրառման հետ: St'ū, Versteegh C., Greek Elements in Arabic Linguistic Thinking, *Studies in Semitic Languages and Linguistics*, Leiden, E.J. Brill, 1977, էջ 178-190

կիրառման անհրաժեշտությունը և մեղադրում էր տրամաբաններին «լեզվի ներսում լեզու կառուցելու մեջ»՝ նրա բացահայտ ընդդիմացումը այնուամենայնիվ անմիջականորեն տրամաբանության դեմ չէր ուղղված. այն ուրիշ հիմք ուներ:

Եթե արաբամուսուլմանական միջավայրում ընդունվեր տրամաբանների այն պնդումը, որ մտածողության կանոնները համընդհանուր են և անկախ են այն լեզվից, որի միջոցով արտահայտվում են մտքերը, և որ լեզուն մտքերի արտաքին պատյանն է միայն, ապա կնշանակեր, որ մշակույթային արժեքները նույնությամբ կարելի է արտահայտել ցանկացած լեզվով: Դա կզրկեր արաբերենին այն առանձնահատուկ և բացառիկ դերից, որը նրան տրվել էր արաբամուսուլմանական մշակույթի ձևավորման գործում հենց սկզբից՝ որպես վերջինիս ինքնարտահայտման միակ հնարավոր միջոց⁸:

Ալ-Ֆարաբին, որը տիրապետում էր և՛ հունական քերականությանն ու տրամաբանությանը, և՛ արաբական քերականությանը, իր աշխատություններում փորձում էր ցույց տալ, որ տրամաբանությունը արաբ և հույն լեզվակիրների համար համարժեք գիտություն է: Որպես այդ նպատակի իրականացման մեթոդ՝ Ալ-Ֆարաբին փորձում էր վերլուծել արաբերենը այսպես կոչված համընդհանուր տրամաբանության տեսանկյունից:

Երկրորդ գլխում՝ «Ալ-Ֆարաբիի լեզվի փիլիսոփայությունը և քերականության ընկալումը», քննության են առնվում IX-X դարերում արաբական միջավայրում լեզվի ծագման և բնույթի մասին մոտեցումները: Այս համատեքստում ներկայացվում են Ալ-Ֆարաբիի կողմից լեզվի ընկալումը և նրա իմացաբանական համակարգի վերլուծությունը, պարզաբանվում է *miṣāl awwal*-ի (նախատիպ) գաղափարը նրա հայեցակարգում: Ապա դիտարկվում է Ալ-Ֆարաբիի մոտեցումը տրամաբանությանը և ներկայացվում քերականության հետ վերջինիս կապի վերլուծությունը: Այնուհետև դիտարկվում են լեզվի մասին պատկերացումները Ալ-Ֆարաբիի և Սիբաուեյհիի հայեցակարգերում: Այստեղ նաև ներկայացվում է արաբերենում մասնիկների և իմաստակիր ասոյթների դասակարգումը՝ հիմնվելով Ալ-Ֆարաբիի «Kitāb al-Alfāz al-Musta'malah fi al-Manṭiq» («Տրամաբանության մեջ կիրառվող ասոյթները») աշխատության վրա:

Ալ-Ֆարաբիի հայեցակարգում քերականության և տրամաբանության հարաբերակցությունը լիովին ըմբռնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հասկանալ նրա՝ լեզվի ընկալումը: Հետևելով Արիստոտելին՝ Ալ-Ֆարաբին գտնում է, որ լեզուն պայմանական է և մարդկանց միջև փոխհամաձայնության արդյունք է: Նրա տեսության մեջ անգամ ակնարկ չկա լեզվի աստվածային ծագման մասին:

Ալ-Ֆարաբիի հայեցակարգում լեզվի պայմանականությունը հանգեցնում է նաև քերականական կանոնների պայմանականությանը, որոնք անհրաժեշտության դեպքում կարելի է փոխել, եթե դրանք չեն

⁸ Фролов Д., Абу Хаййан ат-Таухиди. Диалоги (Из «Книги услады и развлечения»), «Восток – Запад. Исследования, переводы и публикации», Москва, «Наука», 1988, стр. 40-85, стр. 50-51

համապատասխանում *համընդհանուր տրամաբանության* կանոններին: Ունենալով այն համոզմունքը, որ լեզուն ունի պայմանական բնույթ, Ալ-Ֆարաբին նպատակ ուներ ստանալու լեզվաբանական նոր գիտելիք կամ վերահմաստավորելու նախորդը:

Ալ-Ֆարաբիի իմացաբանական համակարգը մեծապես կրում է Արիստոտելի հայացքների ազդեցությունը: Արիստոտելի կողմից ողջ գոյավորը տասը սեռային հասկացությունների՝ կատեգորիաների բաժանելը ինչ-որ իմաստով կարելի է դիտել բաժանում մի կողմից՝ սուբստանցիայի կատեգորիայի, մյուս կողմից՝ մնացյալ ինը՝ պատահման կատեգորիաների միջև:

Արիստոտելյան նման դասակարգման մեջ դրսևորվում է գոյաբանակա՞ն, իմացաբանակա՞ն, տրամաբանակա՞ն, թե՞ լեզվական տեսանկյունը: Այս և նմանատիպ հարցերին Արիստոտելի աշխատությունները ուղղակի կերպով չեն պատասխանում⁹:

Ալ-Ֆարաբին շեշտում է կատեգորիաների լեզվական տեսանկյունը, որը հատուկ նշանակություն ունի նրա լեզվի փիլիսոփայության մեջ: Հետևելով Արիստոտելի փիլիսոփայական բաժանմանը՝ նա առաջադրում է կարևոր լեզվական բաժանում: Ալ-Ֆարաբին սուբստանցիայի կատեգորիայի լեզվական արտահայտություններն անվանում է *miṭāl awwal*, որն արաբական քերականության տերմինաբանության մեջ որևէ համարժեք եզրույթ չունի: Հետևելով Ֆ.Յիմմերմանի¹⁰ սույն աշխատանքում *miṭāl awwal*-ը անվանվում է նախատիպ կամ նախատիպային անուն (*prototype*):

Ի տարբերություն ածանցյալ անունների, որոնք ունեն որոշակի սուբյեկտ ենթադրող կաղապարներ (*aškāl*), *miṭāl awwal*-ը ազատ է որևէ կաղապարից: Այս հանգամանքը խիստ կարևոր է Ալ-Ֆարաբիի հայեցակարգում՝ բայական հանգույցն արաբերենում սահմանելու համար: Բայց հարց է առաջանում՝ արդյո՞ք սուբստանցիայի կատեգորիան սահմանափակվում է միայն *miṭāl awwal*-ով, թե՞ այն ենթադրում է նաև այլ «շերտեր»:

Ալ-Ֆարաբին մի դիտարկում է անում՝ կապված արաբերենում *-iyyah* վերջածանցով կաղապարների (դրանք վերացական անուններն են արաբերենում) կազմավորման հետ. այն է՝ «*Արաբերենում այս [-iyyah վերջածանցով անունների-Ա.Ա.] կաղապարը այնպիսի անունների maṣdar-ի կաղապար է, որոնք և՛ չթեքվող են, և՛ նախադրիպային: Օրինակ՝ «մարդուց» սրանում ենք «մարդկայություն», «էշից»՝ «էշություն», իսկ «տղամարդուց»՝ «տղամարդկություն»*»¹¹:

⁹ Տե՛ս, Մինասյան Ա., Հովհան Որոտնեցին Արիստոտելի երկերի մեկնիչ, Երևան, 2004, էջ 54-55

¹⁰ Այս եզրույթի Ֆ. Յիմմերմանի վերլուծությունը տե՛ս, Zimmermann F., Al-Farabi's Commentary and Short Treatise on Aristotle's De Interpretatione, Oxford, Oxford University Press, 1981, էջ xxx-xxx

¹¹ Abū Naṣr Muḥammad ibn Muḥammad al-Fārābī, Kitāb al-ḥurūf, Bayrūt, Dār al-Mašriq, 1990, էջ 112: § 83: 17-19

Այս համատեքստում *maṣdar-* ը կիրառվում է ոչ թե քերականական բայանուն նշանակությամբ, այլ, ինչպես նշում է Ալ-Ֆարաբին, տվյալ եզրույթի փիլիսոփայական-տրամաբանական նշանակությամբ. այն է՝ *ծագում, աղբյուր, սկզբնաղբյուր*¹²:

Ըստ Ալ-Ֆարաբիի՝ *-iyyah* վերջածանցով վերացական անունները ածանցվում են նախատիպային անուններից և իմացաբանորեն հաջորդում են դրանց: Բայց ինչպես կարելի է նկատել *maṣdar-* ի «ծագում» փիլիսոփայական-տրամաբանական նշանակությունից, գոյություն ունի *-iyyah* վերջածանցով վերացական անունների գոյաբանական և տրամաբանական առաջնահերթություն նախատիպերի նկատմամբ:

Կարելի է ենթադրել, որ Ալ-Ֆարաբիի հայեցակարգում սուբստանցիայի կատեգորիայի լեզվական արտահայտությունները կա՛մ *-iyyah* վերջածանցով վերացական անուններ են, կա՛մ *miṯāl awwal-* ներ:

Ըստ Ալ-Ֆարաբիի՝ *huwiyyah* ասույթը ևս ածանցված է *huwa* (նա) դերանունից՝ հետևելով *-iyyah* վերջածանցով վերացական անունների ածանցման կաղապարին, բայց այն՝ որպես վերացական անուն, գոյաբանորեն և տրամաբանորեն նախորդում է *huwa-* ին:

Ինչ վերաբերում է Ալ-Ֆարաբիի՝ տրամաբանության ընկալմանը, ապա նա ընդլայնում է տրամաբանության ուսումնասիրության առարկաների շրջանակը՝ դրանում ընդգրկելով նաև այն քերականական կարգերը, որոնք նրա հայեցակարգում ընդհանուր են բոլոր լեզուների համար: Ալ-Ֆարաբին քերականության և տրամաբանության հարաբերակցությունը փորձում է ներկայացնել առավել ամբողջական և համակարգված ձևով: Ըստ նրա՝ այս գիտակարգերը նույնական են այն իմաստով, որ երկուսն էլ ասույթների (*alfāz*¹³) համար օրենքներ են տալիս. քերականության կանոնները կիրառելի են միայն մեկ լեզվի ասույթների նկատմամբ, իսկ տրամաբանությանը՝ ընդհանուր են բոլոր լեզուների համար:

Ալ-Ֆարաբիի հայեցակարգում քերականական կանոնների հիմնական գործառույթն է ապահովել ասույթի համապատասխան կապը դրա մտային բովանդակության հետ, որն ընդհանուր է բոլոր ազգությունների համար:

Իսկ արաբական քերականության առաջին պահպանված աշխատության՝ *Al-Kitāb-* ի հեղինակ Սիբաուեյհին գրավոր լեզուն համարում է խոսակցականի հնչյունային պրոյեկցիան: Նա իր ամբողջ վերլուծությունը հիմնում է այն պայմանականության վրա, որ խոսքը հասարակական գործունեության արդյունք է,

¹² Տե՛ս, Abed Sh., Aristotelian Logic and The Arabic Language in Alfarabi, New York, State University of New York Press, 1991, էջ 156

¹³ Ալ-Ֆարաբիի հայեցակարգում *lafz-* ը (*hnq. թ. alfāz*) կարող է նշանակել և՛ բառ, և՛ խոսք, և՛ ասույթ: Ատենախոսության մեջ այս եզրը պայմանականորեն անվանվում է «ասույթ»՝ ներառելով նաև բառն ու խոսքը:

որն ամենանեղ շրջանակում տեղի է ունենում խոսողի (*al-mutakallim*) և լսողի (*al-muxāṭab*) միջև¹⁴:

Այն, ինչ նկարագրում է Սիբաուեյհին, մոտավորապես կարելի է բնորոշել որպես խոսողի մտադրություն (ինտենցիա¹⁵): Այսինքն՝ Սիբաուեյհիի հայեցակարգում խոսողի հաղորդակցական մտադրությունից է կախված, թե ինչպիսի շարահյուսական կառույց նա պետք է ընտրի՝ *լսողի կողմից ճիշտ հասկացվելու և իր խոսքը փեղ հասցնելու համար*: Այդ նպատակին հասնելու համար նա պետք է ծանոթ լինի այն գործառույթային խմբերին և դրանց միջոցով արտահայտվող նշանակություններին (*maʿānī*), որ գործում են հենց արաբերենում: Իսկ ըստ Ալ-Ֆարաբիի՝ «ճշմարիտ» ասույթը հասանելի է միայն տրամաբանության օրենքների միջոցով, որոնք ապահովում են մեր մտքերի կանոնավորությունը, իսկ լեզուն նա դիտարկում է որպես մտքերի արտահայտման կաղապար:

Ստացվում է, որ արաբական քերականության մեջ խոսքի կազմավորման «վեկտորն» ունի լեզվից մտածողություն ուղղվածությունը, իսկ Ալ-Ֆարաբիի հայեցակարգում, ընդհակառակը, այն շարժվում է մտածողությունից դեպի լեզու:

Ալ-Ֆարաբիի տեսության ենթատեքստն այն էր, որ տրամաբանն առավել հմուտ է նշանակությունների ճշմարտացիության որոշման գործում, քան քերականագետը, որը պետք է զբաղվի միայն այդ նշանակությունների ճիշտ արտահայտմամբ որևէ կոնկրետ լեզվում: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ալ-Ֆարաբիի «*Kitāb al-Alfāz al-Mustaʿmalah fī al-Manṭiq*» («Տրամաբանության մեջ կիրառվող ասույթները») աշխատությունը: Այստեղ նա կատարում է արաբերենում իմաստակիր ասույթների (*al-alfāz al-dāllah*) դասակարգում, որտեղ հատկապես հետաքրքրական է մասնիկների (*ḥurūf*) դասակարգումը:

Այսպիսով, ըստ արաբ քերականագետների՝ *մտածողությունը գալիս է կոնկրետ լեզվից*, իսկ Ալ-Ֆարաբիի հայեցակարգում *մտքի կառուցվածքը պետք է թելադրի լեզվական արտահայտությունների կառուցման ուղին*: Գլխավորապես հենց այս գաղափարի վրա է հիմնված Ալ-Ֆարաբիի լեզվի փիլիսոփայությունը, որը կարելի է տեսնել նաև նրա՝ արաբերենի բայական համակարգի վերլուծության ժամանակ:

Երրորդ գլխում՝ «Արաբերենի բայական համակարգում ներկա ժամանակի և բայական հանգույցի հիմնախնդիրն ըստ Ալ-Ֆարաբիի», ներկայացվում է Ալ-Ֆարաբիի՝ արաբերենի բայական համակարգի վերլուծությունը՝ հիմնված ներկա ժամանակի և բայական հանգույցի հիմնախնդրի վրա, քննության են առնվում *fi'*

¹⁴ Մանրամասն տե՛ս, Carter M., An Arab Grammarian of The Eighth Century A.D.: Contribution to the History of Linguistics, *Journal of the American Oriental Society*, vol. 93, No. 2, 1973, pp. 146-157

¹⁵ Եզրույթի մասին տե՛ս, Экизян А., Интенция как объект междисциплинарного исследования, «*Известия Южного федерального университета. Филологические науки*», No. 2, Ростов-на-Дону, 2015, стр. 125-131

dā'im- ի գաղափարը և բայի ժամանակների ստորակարգության համակարգը արաբական քերականության մեջ, անցկացվում են նաև որոշ զուգահեռներ հայ հունարան դպրոցի մոտեցումների հետ: Այստեղ վեր են հանվում Ալ-Ֆարաբիի կողմից կիրառված միջգիտակարգային մեթոդաբանական մեխանիզմները՝ իր բուն նպատակի տեսանկյունից. այն է՝ հիմնվելով հունական քերականության և տրամաբանության վրա՝ ներկայացնել արաբական քերականության «բացթողումները» և արաբերենի լեզվական երևույթները համապատասխանեցնել այսպես կոչված համընդհանուր տրամաբանությանը:

Արաբերենը չունի բայաձև, որն արտահայտում է ներկա ժամանակը՝ առանց ապառնիի հավելյալ իմաստի: Ալ-Ֆարաբին, հետևելով արիստոտելյան տրամաբանությանը, առաջարկում է «վերակազմավորել» արաբերենի բայական համակարգը տրամաբանության միջոցով: Նրա հայեցակարգում անցյալը և ապառնին միավորվում են «համաժամանակային ներկա»- ի մեջ, որը խիստ տարբեր է արաբերենի բայական համակարգի բնականոն զարգացած ուղղվածությունից:

Ալ-Ֆարաբին ներկայացնում է ներկա ժամանակի (*zamān ḥādīr, al-ān al-ḥādīr*) այլընտրանքային սահմանում: Նա նշում է, որ Արիստոտելը բայ է անվանում միայն ներկա ժամանակի բայը: Իսկ երբ անհրաժեշտ է նշել անցյալ կամ ապառնի ժամանակները, Արիստոտելն օգտագործում է ոչ թե բայ (*al-kalimah*), այլ բայի թեքում (*taṣrif al-kalimah*) եզրույթը:

Հարկ է նկատել, որ հայ հունարան դպրոցի (այն ձևավորվել և զարգացել է մոտ. V-VII դդ.¹⁶) ներկայացուցիչ Մովսես Քերթոզը գրեթե նույն կերպ է ներկայացնում բայի ներկա ժամանակը: Նա ներկան համարում է բայի ուղիղ ձևը՝ նշելով, որ մյուսները նրա փոփոխություններն են¹⁷:

Ալ-Ֆարաբիի՝ ներկա ժամանակի ընկալումը վերլուծելուց հետո ներկայացվում է արաբերենում բայական հանգույցի բացակայության հիմնախնդիրը նրա հայեցակարգում:

Ինդիրն այն է, որ թեև արաբերենն անցյալ և ապառնի ժամանակներում ունի բայական հանգույց¹⁸, ներկա ժամանակում այն արտահայտված չէ: Այսպես՝ *Zayd yamshi*- ն (Չեյդը քայլում է) կարող է վերափոխվել *Zayd mashi*- ի (Չեյդը քայլում է): Բայց այս նախադասությունը չի համապատասխանում «S-ը P է» ստանդարտ տրամաբանական կառուցվածքին, քանի որ այն չունի բայ, ունի միայն «*mashi*» (բառ. քայլող) դերբայը: Այս վերջին ձևը, որը Բասրայի քերականագետների եզրաբանությամբ *ism al-fā'il*- ն է (գործողի անուն կամ ներգործական դերբայ), Քուֆայի քերականագետներն¹⁹ անվանում էին *fi'l dā'im*:

¹⁶ Մուրադյան Ա., նշվ. աշխ., էջ 10

¹⁷ Տե՛ս, Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 168-169; Адоиц Н., նշվ. աշխ., էջ 174

¹⁸ Խոսքը *kāna* (լինել) պակասավոր բայի մասին է:

¹⁹ Քուֆա և Բասրա քաղաքները արաբական քերականագիտական առաջին կենտրոններն էին:

Վերջիններիս հայեցակարգում այն ընդհանուր և շարունակական ժամանակ էր, որը չէր մատնանշում ո՛չ անցյալը, ո՛չ ներկան, ո՛չ էլ ապառնին: Բասրայի քերականագետները պնդում էին, որ սխալ է *fi'l dā'im*-ը բայ անվանել, քանի որ բոլոր ասպեկտներում այն դրսևոլում է որպես անուն: Ալ-Ֆարաբին ևս, հետևելով բասրացիներին, *fi'l dā'im*²⁰-ը բայ չի դիտարկում՝ այն համարելով ածանցյալ անուն: Նա նշում է, որ եթե *fi'l dā'im*-ը բայ լիներ, ապա պետք է ունենար էական բայի (*al-kalimah al-wujūdiyyah*) հավելյալ իմաստ: Ստորոգման ժամանակ այն էական բայի կարիք չէր ունենա: Բայց ստացվում է, որ դրա կապը ենթակայի հետ չի իրականանում, քանի դեռ էական բայը (նախադասության մեջ բայական հանգույցը) կա՛մ բացահայտ ձևով արտահայտված չէ (*muẓharah fi al-lafẓ*), կա՛մ էլ լռելյայն մտքում ենթադրված (*muq̄marah fi al-nafs*)²¹ չէ: Նա օրինակ է բերում հետևյալ նախադասությունները. *Zayd yūjad 'ādilan* (Ձեյդը արդար է) և *Zayd yūjad māšīyan* (Ձեյդը քայլում է): Բայց նախադասության նման կառույցները արաբերենի համար խիստ արհեստական են, և անհրաժեշտություն է առաջանում պարզել բայական հանգույցի գաղափարը Ալ-Ֆարաբիի հայեցակարգում:

Ըստ Ալ-Ֆարաբիի՝ բոլոր լեզուները համապատասխանում են միմյանց, քանի որ դրանք համապատասխանում են հաստատուն տրամաբանական կառուցվածքի (այլ կերպ ասած՝ մտածողությանը), որն արտացոլում է իրականությունը բնական ճանապարհով (*bi-al-tab'*): Բայական հանգույցը միջոց է՝ լեզվում արտահայտելու այն ամենը, ինչ մեր մտքում է: Հետևաբար, ինչպես պնդում է Ալ-Ֆարաբին, հանգույցը (*rābiṭah*) ինչ-որ կոնկրետ լեզվին բնորոշ առանձնահատկություն չէ, *այլ պարզադիր պայման է աշխարհի բոլոր լեզուների համար*:

Կարևոր է նկատել, որ Ալ-Ֆարաբին բայական հանգույցը դիտարկում է ոչ թե որպես բայ, որը հավելյալ կերպով ենթադրում է ժամանակի հղում²², այլ որպես «համաժամանակային կապորդ»²³: Սա ենթադրում է ներկա, ապառնի և անցյալ ժամանակները միավորող եզրույթ: Այլ կերպ ասած՝ մի եզրույթ, որը զուրկ է ժամանակի հղումից և հանդես է գալիս զուտ որպես հանգույց:

Ալ-Ֆարաբիի հայեցակարգում ստորոգումը կարող է իրականանալ միայն բայական հանգույցի միջոցով: Ընդ որում, Ալ-Ֆարաբին նշում է, որ այն կարող է

²⁰ Ալ-Ֆարաբին բառացիորեն չի նշում *fi'l dā'im* եզրույթը, բայց նրա աշխատանքի համատեքստից հասկանալի է դառնում, որ նա հենց *fi'l dā'im*-ը նկատի ունի: Sṭ'ū, Abū Naṣr Muḥammad ibn Muḥammad al-Fārābī, Ṣarḥ Al-Fārābī li-kitāb Aristūṭalis fi al-'Ibārāh, Bayrūt, *Al-Maṭba'ah al-Kāṭūlikīyyah*, 1960, էջ 41

²¹ Նույն տեղում:

²² Sṭ'ū, Aristotle, *De Interpretatione*, translated with notes by J. L. Ackrill, Oxford, *Oxford University Press*, 1963, 16^b6

²³ Սույն եզրույթը՝ «համաժամանակային կապորդ» (“timeless connector”), առաջարկված է Շ. Աբեդի կողմից: Sṭ'ū, Abed Sh., նշվ. աշխ., էջ 136

լինել կա՛մ բացահայտ կերպով արտահայտված, կա՛մ ներակա կերպով ենթադրված:

Ալ-Ֆարաբիի՝ բայական հանգույցի ընկալումը ընդգծում է այն փաստը, որ նա տարբերում է լեզվի երկու մակարդակ՝ տրամաբանական և քերականական (համապատասխանաբար՝ խորքային և մակերեսային), որը գալիս է տրամաբանության և քերականության հարաբերակցության նրա ընկալումից: Ցանկացած լեզու ունի որոշակի տրամաբանական կառուցվածք, որը լեզուների մի մասում կարող է բացահայտ (էքսպլիցիտ) կերպով արտահայտված լինել, իսկ մնացյալում՝ ոչ բացահայտ (իմպլիցիտ, ներակա):

Որպես արաբերենի բայական հանգույցներ՝ Ալ-Ֆարաբին նշում է *yūjad* (կա, գոյություն ունի) էական բայը, դրա բայանունից (*wajūd*) ածանցված *mawjūd* դերբայը և *huwa* (նա) անջատ դերանունը: Ընդ որում, նա բազմիցս ընդգծում է, որ երբ այդ եզրույթները կիրառվում են որպես հանգույցներ, պետք է վերացարկված (*mujarradah*) լինեն իրենց նախնական, բուն իմաստից և օգտագործվեն հատուկ ձևով. այն է՝ միայն ցույց տալու համար կապը նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև: Այս համատեքստում Ալ-Ֆարաբիի հիմնական նպատակներից մեկն էր հիմնավորել, որ ներկա, անցյալ և ապառնի ժամանակները միավորող «համաժամանակային կապորդ» կարող են լինել միայն նախատիպային անունները (*miṣāl awwal*), որոնք ծագում են վերացական անունների իմաստ ունեցող միավորներից (*maṣdar*)՝ չպարունակելով որևէ ժամանակային հղում և վերացարկված լինելով ցանկացած առարկայից:

Բայց հարկ է նկատել, որ անգամ տրամաբանության տեխնիկական լեզուն արաբերենի փոխադրելիս Ալ-Ֆարաբին սովորաբար դուրս է հանում հանգույցը և օգտագործում է ոչ տեխնիկական լեզու: Այսինքն՝ նրա նպատակը արաբերենի բնականոն զարգացման ուղղությունը փոխելը չէր: Այս առումով Ալ-Ֆարաբիի ամենահիմնական խնդիրն էր ապացուցել, որ ցանկացած լեզվում, այդ թվում և արաբերենում, առկա է բայական հանգույց, որն ապահովում է նախադասության ամենահիմնական բաղադրիչը՝ ստորոգումը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ալ-Ֆարաբիի հայեցակարգում *արտալեզվականը պահպանվում է իբրև լեզվական ստորոգման համընդհանուր ենթաշերտ*: Սրանով Ալ-Ֆարաբին արաբական լեզվաբանության մեջ առաջին անգամ տարբերակում է ստորոգման այն գլխավոր տեսակները, որոնք արդեն ժամանակակից լեզվաբանության մեջ է. Աթայանը նշում է որպես *բացահայտ (մակերեսային) և ոչ բացահայտ (խորքային) ստորոգումներ*²⁴:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության ընթացքում արված դիտարկումները հնարավոր է ամփոփել հետևյալ եզրափակիչ դրույթներում.

²⁴Աթայան Է., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 207-208

1. Ալ-Ֆարաբիի հայեցակարգում լեզվի պայմանականությունը հանգեցնում է քերականական կանոնների պայմանականությանը, որոնք անհրաժեշտության դեպքում կարելի է փոխել, եթե դրանք չեն համապատասխանում համընդհանուր տրամաբանության օրենքներին: Հետազոտությունը ցույց է տալիս, որ Ալ-Ֆարաբին, ներկայացնելով լեզվի պայմանական բնույթի իր տեսությունը, նպատակ ուներ ստանալու լեզվաբանական նոր գիտելիք կամ վերաիմաստավորելու նախորդը:
2. Ելնելով արաբական քերականության և Ալ-Ֆարաբիի հայեցակարգերում մտային բովանդակության (*ma'nā*) մասին տարբեր պատկերացումների վերլուծությունից՝ հետազոտությունը վեր է հանում այն մեթոդները, որոնց միջոցով լեզու-մտածողություն հարաբերակցության մեջ *ա*) արաբական քերականությունն ընդգծում է հնչյունային ձևի և մտային բովանդակության փոխկապակցվածությունը, *բ*) Ալ-Ֆարաբին ցույց է տալիս մտային բովանդակության գերակայությունն ու առավելությունը հնչյունայինի նկատմամբ:
3. «*Kitāb al-Alfāz al-Musta'malah fī al-Manṭiq*» («Տրամաբանության մեջ կիրառվող ասոյթները») աշխատությունում Ալ-Ֆարաբին բացահայտ հայտարարում է, որ հույն քերականագետներն ավելի ամբողջական պատկերացում են ունեցել լեզվի մասին՝ ներմուծելով մասնիկների (*ḥurūf*) դասակարգման շատ ավելի համարժեք համակարգ և եզրաբանություն: Դրանից ելնելով՝ Ալ-Ֆարաբին փնտրում է ուղիներ՝ արաբական քերականության մեջ հայտնաբերված «թերությունները» շտկելու համար: Այդ նպատակով նա կատարում է արաբերենում *ḥarf* (մասնիկ) խոսքի մասի յուրովի դասակարգում՝ հիմնվելով հունական քերականության և տրամաբանության վրա: Հետազոտությունը քննության է առնում այն սկզբունքներն ու մեթոդները, որ կիրառում է Ալ-Ֆարաբին՝ տրամաբանության և քերականության համապատասխանությունը ցույց տալու և ըստ այդ համապատասխանության՝ արաբերենում մասնիկների նորովի դասակարգում կատարելու համար:
4. Ալ-Ֆարաբին Արիստոտելին մեխանիկորեն չի հետևում: Հետազոտությունը ցույց է տալիս, որ նա հունական տրամաբանական աշխատությունների թարգմանություններն ուղեկցում է սեփական վերլուծություններով՝ լեզվական որոշ երևույթների համար որոնելով փիլիսոփայական-տրամաբանական հիմնավորումներ: Ալ-Ֆարաբին ներմուծում է *miṭāl awwal* (նախատիպ) եզրույթը, որի միջոցով փորձում է արտահայտել ներկա, անցյալ և ապառնի ժամանակները միավորող «համաժամանակային կապորդ»- ի՝ բայական հանգույցի (*rābitah*) գաղափարը:
5. Ալ-Ֆարաբին, ըստ էության, առաջին անգամ արաբական լեզվաբանության մեջ ներմուծում է բացահայտ և ոչ բացահայտ ստորոգումների գաղափարը: Եվ ինչպես պարզ դարձավ հետազոտության ընթացքում, վերջինիս ընկալումը Ալ-Ֆարաբիի կողմից ակներև զուգահեռներ ունի ժամանակակից լեզվաբանական մոտեցումների հետ:

6. Պարզ է դառնում, որ հայ և արաբական քերականական ավանդույթները, ձևավորման սկզբնական շրջանում կրելով հին հունական գիտական մտքի ազդեցությունը, շրջանառել են մի շարք համանման հարցեր, այդ թվում բայի ժամանակների և բայի ու անվան առաջնության հարցերը: Այս համատեքստում հարկ է ընդգծել Ալ-Ֆարաբիի և հայ հունաբան դպրոցի ներկայացուցիչ Մովսես Քերթոզի կողմից բայի ժամանակների համահունչ ընկալումը: Նրանք երկուսն էլ կարևորում են բայի ներկա ժամանակը՝ այն համարելով բայի ուղիղ ձև, և գերադասելով անցյալ և ապառնի ժամանակներից:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ փիլիսոփա և տրամաբան Ալ-Ֆարաբին փորձում է մշակել միջգիտակարգային հետազոտական մեթոդների որոշակի համակարգ՝ նպատակ ունենալով արաբերենի լեզվական երևույթները համապատասխանեցնել այսպես կոչված համընդհանուր տրամաբանությանը: Դրա հետ մեկտեղ ժամանակի գիտական միջավայրում առավելագույնս հասկացվելու համար նա իր տրամաբանական պնդումներում երբեմն դիմում է քերականական գործիքակազմի օգնությանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. ԱՐԱԲԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ՆՐԱ ԿԱՊԸ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԸՍՏ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հ. 6, Երևան, 2013, էջ 8-22:
2. ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ, «Արևելագիտության հարցեր», հ. 8, Երևան, 2014, էջ 131-142:
3. ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՍՏ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հ. 7, Երևան, 2014, էջ 43- 56:
4. ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԲԱՅԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԸՍՏ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ, «Կանթեղ» գիտական հոդվածներ, 1/66, Երևան, 2016, էջ 12-19:
5. ԼԵԶՎԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԸ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն», 1(36), Երևան, 2016, էջ 39-47:
6. ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ և ՍԻԲԱՈՒԵՅՀԻԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն», 1(36), Երևան, 2016, էջ 48-58:
7. «ԲԱՅ»-Ի ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ (ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ), «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն», 1(42), Երևան, 2017, էջ 71-82:

АНДРЕАСЯН АРУСЯК КОЛЯЕВНА
ЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ГРАММАТИКИ ПО АЛЬ- ФАРАБИ
(опыт типологического исследования)

Диссертация на соискание учёной степени кандидата филологических наук по специальности 10.02.02 «Общее и сравнительное языкознание».

Защита состоится 29-го января 2018 г., в 13:00 часов, на заседании специализированного совета 019 ВАК по языкознанию, действующего при Институте языка им. Г. Ачаряна НАН РА, по адресу: 0015, г. Ереван, ул. Григор Лусаворич, 15.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблеме соотношения арабской грамматики с греческой логикой и грамматикой, на основе анализа трудов арабского философа-неоплатоника X века Аль-Фараби (870-950).

В диссертации предпринимается попытка показать интеллектуальную атмосферу этой эпохи, которая в общих ее чертах хорошо представлена в известном диспуте между логиком Абу Бишр Маттой (870-940) и грамматиком Абу Саидом аль-Сирафи (893-979). Этот диспут отчетливо показывает главное противоречие между ними. Арабские грамматисты, представленные Аль-Сирафи, утверждали, что логика является вторичной по отношению к грамматике любого языка. И напротив, логики, представленные Маттой, были уверены, что логика универсальна для всех языков мира. В этом отношении Аль-Фараби имел альтернативный подход.

Следует отметить, что идейно Аль-Фараби поддерживает логиков, но в то же время, в совершенстве владея арабской грамматикой, а также греческой логикой и грамматикой, пытается смягчить противоречие между логиками и грамматиками. Главная цель диссертации заключается в выявлении и описании тех, по сути своей, междисциплинарных исследовательских приёмов, которые разрабатывает и применяет Аль-Фараби с тем, чтобы привести языковые факты арабского языка в соответствие с греческой логикой. Диссертация также ставит целью проведение некоторых параллелей между, с одной стороны – арабской грамматикой и логико-грамматическими подходами Аль-Фараби, а с другой стороны - подходами представителей армянской грекофильской школы (V-VII вв.) на ранних этапах формирования армянской грамматики.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

В введении рассматриваются узловые вопросы исследования, её структура, цель,

основные поставленные вопросы, краткий обзор использованной литературы и история изучения вопроса.

В первой главе - *"Арабская грамматическая традиция и ее связь с греческой логикой в VIII-X вв."* - описывается история формирования арабской грамматической традиции и уточняется характер греческого влияния на нее. В этой главе представлен период знакомства арабов с греческой, в частности, аристотелевской логикой, который иллюстрируется известным в литературе дебатом между арабскими грамматиками и логиками относительно связи этих наук.

Во второй главе, озаглавленной *"Философия языка и восприятие грамматики у Аль-Фараби"*, представлены взгляды на происхождение и характер языка в арабской среде в IX-X вв. В этой главе делается попытка проиллюстрировать эпистемологическую систему Аль-Фараби, а также выявить идею «*miṭāl awwal*» -а (*прототип*) в его концептуальной системе. В этом контексте также анализируется восприятие языка в концептуальных системах Аль-Фараби и Сибавайхи (умер в 796г.) - автора первого дошедшего до нас грамматического трактата *"Al-Kitāb"*. В этой главе обсуждается понимание логики и ее отношение к грамматике по Аль-Фараби. Здесь также представлена классификация частиц (*ḥurūf*) и осмысленных речений (*al-alfāz al-dāllah*) на арабском языке, опирающаяся на книги Аль-Фараби *"Kitāb al-Alfāz al-Musta'malah fi al-Manṭiq"* (*"Речения, используемые в логике"*).

В третьей главе (*"Проблема связки и настоящего времени глагола в арабском языке по Аль-Фараби"*) анализируется отсутствие связки на арабском языке и характер арабского глагола настоящего времени на основе концептуальной системы Аль-Фараби, рассматриваются идея *"fi'l dā'im"* - а и иерархическая система глагольных времен в арабской грамматике, а также проводятся параллели с подходами армянской грекофильской школы. Арабский язык не использует связку в предложениях настоящего времени и не имеет форму глагола настоящего времени, которая выражала бы его без дополнительного значения будущего времени. Следуя логике Аристотеля, Аль-Фараби предлагает «перестроить» систему арабского глагола с помощью инструментария логических исследований. В этой главе излагаются основные направления междисциплинарных методов исследования, используемые Аль-Фараби для реализации его основной цели – попытки представить языковые факты арабского языка в соответствии с универсальной логикой.

В заключении диссертации обобщены и изложены основные результаты работы.

ARUSYAK ANDREASYAN

LOGICAL BASIS OF GRAMMAR BY AL-FARABI

(an attempt of typological research)

Dissertation for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.02 - “General and Comparative Linguistics”.

The defense of the thesis will be held on January 29, 2018, at 13:00, at the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015 Yerevan, 15 G. Lusavorich St.), Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission).

SUMMARY

The dissertation is dedicated to the relation of Arabic Grammar to Greek Logic and Grammar, based on the analysis of works of Al-Farabi (870-950), a 10th century Arab Neoplatonic philosopher.

The thesis tries to illustrate the intellectual environment of that century which can be obviously seen in the well-known debate between the logician Abu Bishr Matta (870-940) and the grammarian Abu Said al-Sirafi (893-979). This debate crystallizes the main controversy between them. The Arab Grammarians, represented by Al-Sirafi, argued that Logic is secondary to Grammar of any language. On the contrary, the Logicians, represented by Matta, were sure that Logic is universal for all languages of the world. In this regard, Al-Farabi has an alternative approach.

It should be noted, that ideologically Al-Farabi supports logicians, but at the same time, he tries to soften the contradiction between logicians and grammarians, having a profound knowledge of Arabic Grammar and Greek Logic and Grammar. The main purpose of the thesis is to identify and present those, in fact, interdisciplinary research methods that Al-Farabi has developed and applied to bring the linguistic facts of Arabic in line with Greek Logic. The thesis also draws parallels between Arabic grammar and Al-Farabi's logical and grammatical approaches, and the approaches of the Hellenophile school (V-VII cc.) representatives in the early stages of Armenian grammar formation.

Dissertation structure. The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion and a bibliography.

The Introduction describes the main issues of the study, explains the goal and objectives of the research, provides a short discription of bibliography and the history of the topic research.

The First Chapter entitled "*Arab Grammatical Tradition and Its Relation to Greek Logic in VIII-X Centuries*" describes the history of the formation of Arabic grammatical tradition and clarifies the nature of Greek influence on it. This chapter presents the period in which Arabs get acquainted with Greek and especially Aristotelian logic, which is accompanied by the well-known debate in literature between Arab grammarians and logicians over the relationship of these sciences.

The Second Chapter entitled "*Al-Farabi's Philosophy of Language and Perception of Grammar*" presents views about the origin and nature of language among Arabs in IX-X centuries. This chapter has attempmted to illustrate Al-Farabi's epistemological system, as well as the idea of "*miṭāl awwal*" (*prototype*) in his conceptual system. In this context, it also presents the perception of language in the conceptual systems of Al-Farabi and Sibawayhi (d. 796) – the author of the first surviving grammatical treatise "*Al-Kitāb*". This chapter discusses Al-Farabi's perception of logic and its relation to grammar, presenting the classification of particles (*ḥurūf*) and meaningful utterances (*al-alfāz al-dāllah*) in Arabic, based on his book "*Kitāb al-Alfāz al-Musta'malah fī al-Manṭiq*" ("*Utterances employed in Logic*").

The Third Chapter ("*Al-Farabi's Suggestions Concerning the Key Problem of the Present Tense Verb and Copula in the Arabic Language*") analyzes the lack of the copula in Arabic and the essence of present tense of Arabic verbs, based on Al-Farabi's suggestions. Besides, the idea of "*fī'l dā'im*" and the hierarchy system of verb tenses have been examined in Arabic grammar by drawing parallels with the approaches of Armenian Hellenophile school. The Arabic language has no copula in the senteces of the present tense and it doesn't have any verb-form for the present tense without an attached additional meaning of future. Following the Aristotelian logic, Al-Farabi proposes to "restructure" the Arabic verb system by means of logical research tools. This chapter outlines the main directions of interdisciplinary research methods used by Al-Farabi aimed to satisfy his main purpose, that is, to correlate the linguistic facts of the Arabic language with the universal rules of Logic.

The Conclusion summarizes and presents the main findings of the dissertation.